և խուրձից կապած համարն է 48 ա-
միան։ Ուրեմն՝ բազմացո՛ առաջին
մին մարդն՝ և մին ամիսն մին զմինով.
նոյնպէս՝ և երրորդ տեղի 8 մարդն
և 48 ամիսն մին զմինով. որ լինին 3
գլխաւոր համարք. յետոյ արա՛՝ որ-
պէս հրամայէ քեզ Երեքի կանոնն։

Է Փլամանն պիտի 200 լիբրա ապրա-
նաց համար՝ չուրի 100 աղաչ Ճնա-
պարհ՝ քիրա տայ 800 դիան փող.
ապա Փաղիրբէգն քանի՞ պիտի տայ
300 լիբրա ապրանաց համար՝ մին
չև 400 աղաչ Ճանապարհ։

Պատասխանի՝ 4800 դիան փող։

Բազմացո՛ յառաջ մին զմինով 200 և
100 համարքն. յետոյ 300 և 400
համարքն մէկ զմէկով. ապա՝ Եր-
եքի կանոնաւն առաջամարա՛, և կու-
տեսնուս որ Փաղիրբէգին 4800
դիան փող պիտի։

Ը Փրանկստանու Փրանչէսկօ ա-
նուն մին բազրկան Լնդստն գնեց
50 հազար լիբրա բիբար՝ 999 հա-
զար դիան։ ամա 3 տեղ գօմրուկ
տվեց. առաջին գօմրուկն էր՝ 100
հազար դիան. երկրորդն էր 60 հա-
զար դիան. և երրորդն՝ 40 ռ դիան։

Սին